ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1483 28.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՏՍԻՐ
ՄՏՈՒ № 4361
31 10 14

Հարգելի պարոն Գասպարյան.

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Գավառի ՁՊՎ արձանագրել է ինչպես մի շարք թերություններ և խախտումներ, այնպես էլ Դիտորդական խմբի աշխատանքները խոչընդոտող փաստեր:

1. Դիտորդական խումբը մուտք գործելով ՀՀ ոստիկանության Գավառի բաժին արձանագրեց, որ ՁՊՎ-ի օրվա հերթապահ ոստիկան Կ. Խաչատրյանը գտնվում էր ոստիկանության հերթապահ մասում այն դեպքում, երբ ՁՊՎ-ում պահվում էր երկու կալանավորված անձ: Ավելացնենք նաև, որ տվյալ ոստիկանը ոչ թե ՁՊՎ-ն լքել էր և կալանավորվածներին թողել էր ՁՊՎ-ի վարչական տարածքում բոպեների կտրվածքով, այլ նա երկար ժամանակ էր գտնվել հերթապահ մասում, որովհետև հագուստը կարգի բերելով՝ հագնվելով, շտապում էր ՁՊՎ:

2. ՁՊՎ-ի վարչական տարածք մուտք գործելով Դիտորդական խումբը արձանագրեց, որ ճաշասենյակը ամբողջությամբ գտնվում էր թափթփված վիճակում: Առանձնապես խոսքը վերաբերվում է նրան, որ երեք-չորս հոգով ճաշասենյակում հաց էին կերել, սրճել էին և այդ ամբողջը թողել էին այդ վիճակում: Ավելացնենք նաև, որ չժխտվեց այն փաստը, որ այդտեղ սնվել են նաև ՁՊՎ-ում պահվող կալանավորված անձիք և նրանց հանձնուքը ամբողջությամբ գտնվում էր ոչ թե իրենց մոտ՝ խցերում, այլ ճաշասենյակում *(փաստը հաստատող լուսանկարներ 1,2,3,4/:*

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
8395
30 10 17

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

3. ՁՊՎ-ի ռեժիմային գոտի մուտք գործելով Դիտորդական խումբը արձանագրեց, որ այն խցերում, որտեղ պահվում են կալանավորված անձիք, այդ խցերի դռան վրայի դիտանցքերը երկուսն էլ բաց էին: Դիտորդական խմբի անդամների կողմից երկու խցերի դիտանցքերն էլ փակվեցին, որպեսզի ապահովվի անվտանգության նորմերը, և որպեսզի կալանավորված անձիք մասնակից չլինեն Դիտորդների և ոստիկանների ընդհանուր քննարկումներին:

Որոշ ժամանակ անց անհասկանալի պատճառներով երկու խցերի դիտանցքերը նորից բաց էին: Դիտորդական խմբի այն հարցին, թե ինչու են կրկին բացվել դիտանցքերը, ոչ ոք չկարողացավ տալ համապատասխան բացատրություն:

4. Այցելության պահին Գավառի տարածաշրջանում ջերմաստիճանը -2^{0}C էր, իսկ ՁՊՎ-ի տարբեր հատվածներում ջերմաստիճանը տատանվում էր +10^{0}C - +13^{0}C: Նշենք, որ ՁՊՎ-ի տարածքում հավելյալ հագուստով նստելը և աշխատելը անհնարին էր, և ՁՊՎ-ն չէր ջեռուցվում այն դեպքում, երբ Դիտորդական խումբը հաջորդիվ այցելություն կատարելով ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Վարդենիսի և Մարտունու ՁՊՎ-ներ արձանագրեց, որ այնտեղ արդեն 10 օր էր, ինչ ՁՊՎ-ները ջեռուցվում են: /*փաստը հաստատող լուսանկար 5*/:

5. ՁՊՎ-ի մի խցում երկու ներքնակներն էլ բացակայում էին, Դիտորդական խմբի հարցին, թե չունեն անհրաժեշտ ներքնակներ, ոստիկանները պարզաբանեցին, որ ՁՊՎ-ում պահվող կալանավորվածները գանգատվել են մահճակալի չոր լինելուց և դրանք հավելյալ տրամադրել են նրանց: Նշենք, որ տվյալ գործառույթը, եթե կատարվել է մարդասիրական նպատակներով, Դիտորդական խմբի համար դա գովելի է: Բայց Դիտորդական խումբը չի կարծում է, որ դա այդպես է, որովհետև,

- եթե մարդասիրական նորմերը հաշվի առնվեր կարելի էր ջեռուցել ՁՊՎ-ն,
- անվտանգության նորմերը հաշվի առնելով և ոստիկանը ինքն իրեն հարգելով, հանձնուքները և համապատասխան սնունդը կտրամադրեր խցերում, այլ ոչ թե այդ ամենը կկազմակերպվեր ճաշասենյակում և Դիտորդական խումբը չէր արձանագրի ճաշասենյակի թափթփված և կեղտոտ վիճակը:

6. Բուժսենյակում տեղադրված էր երկու մահճակալ, երկուսի բարձի երեսները գտնվում էին կեղտոտ վիճակում: /*փաստը հաստատող լուսանկարներ 6,7*/:

7. Լոգասենյակում ընդհանուր օգտագործված էր չոր քլոր, որի արտանետած գազերից հնարավոր չէր որոշ ժամանակ գտնվել այնտեղ: /*փաստը հաստատող լուսանկար 8*/:

8. Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր կեղտոտ վիճակում /*փաստը հաստատող լուսանկարներ 9, 10*/:

9. Խցի պատուհանները բացվում են զբոսաբակի կողմից աստիճանի օգնությամբ, բայց արդեն երկու այցելություն է, ինչ աստիճանի օգնությամբ էլ ոստիկանները չեն կարողանում բացել խցի պատուհանները, արդյունքում կարելի է համոզված ասել, որ տվյալ ՁՊՎ-ի խցի պատուհանները ընդհանրապես չեն բացվում:

10. Կանանց և անչափահասների համար նախատեսված խցի ջրի ծորակը չէր գործում և առկա էր կեղտոտ սրբիչ:

11. Առանձնազրույցի ընթացքում կալանավորված Մ. Հունանյանը Դիտորդական խմբին տեղեկացրեց, որ այդտեղ գտնվելու երկու օրերի ընթացքում և տեսակցություն է ունեցել հարազատների հետ, և հանձնուք է ստացել: Ընդհանուր ուսումնասիրությունների արդյունքում ոչ անձնական գործում և ոչ էլ համապատասխան գրանցամատյաններում փաստը հաստատող ոչինչ չարձանագրվեց: Տեղում պարզաբանում ստանալու ժամանակ կատարվածի վերաբերյալ ոստիկանների ճնշման ներքո կալանավորված անձը փոխեց խոսքերն ասելով, որ դա եղել է անցյալ անգամ, երբ եկել է Գավառի ՁՊՎ դատաքննության մասնակցելու: Ավելացնենք նաև, որ այդ ամենը կատարվեց այն ժամանակահատվածում, երբ Դիտորդական խմբի անդամները զրուցում էին հերթապահ ոստիկանի հետ, հերթապահ մասից մեկ այլ ոստիկան կալանավորից պարզաբանում էր պահանջում՝ երբ է ստացել հանձնուք և երբ է տեսակցել հարազատների հետ, և դրանից հետո կալանավորված անձը փոխեց իր խոսքերը:

12. Սուսաննա Հովիկի Կարապետյանը 14.10.2014թվ. ժամը 12:15-ից մինչև 18:40-ը ընկած ժամանակահատվածում տեղափոխվել էր քննչական գործողության ՁՊՎ-ի տարածքից դուրս:

Հրանտ Սամվելի Շաբոյանը 23.09.2014թվ-ին ժամը 18:45-ից մինչև 24.09.14թվ-ի ժամը 01:20-ը տեղափոխվել է քննչական գործողության ՁՊՎ-ի տարածքից դուրս:

Երկու դեպքում էլ բացակայում էր նշված անձանց վերաբերյալ ՁՊՎ-ի տարածքից դուրս քննչական գործողություններ կատարելու հայտերը:

13.Դիտորդական խմբի անդամները հերթապահ մասի ժամանակավորապես պաշտոնակատարից խնդրեցին տրամադրել որոշակի հիմքեր /քննչական գործողությունների հայտեր, ձերբակալման արձանագրություններ և ձերբակալվածների ազատ արձակելու որոշումներ/: Վերջինս չտրամադրեց նշված փաստաթղթերը՝ պարզաբանելով, որ ինքը պաշտոնակատար է 22.09.14թ-ից և համապատասխան փաստաթղթերը իր մոտ չեն գտնվում:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել, թե Դիտորդական խումբը նույնիսկ 12 կետում նշված անձանց վերաբերյալ ինչ ամսաթվերով փաստաթղթեր է խնդրել, որը նույնպես չի տրամադրվել: Դիտորդական խումբը գտնում է, որ այս քայլերով խոչընդոտվել է Դիտորդական խմբի ընդհանուր բնականոն աշխատանքը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org